
**ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հերբերտ Հարությունյան

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի

Սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ

Համառոտագիր: Սույն հոդվածի շրջանակներում հեղինակը քննարկել է օրենսդիր իշխանության սահմանադրական պատասխանատվության որոշ մեթոդաբանական հարցեր: Օրինակների տեսքով դիտարկվել է եվրոպական մի շարք երկրների իրավակիրառ պրակտիկան: Աշխատանքում հստակ դասակարգման է ենթարկվել օրենսդիր իշխանության սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը՝ ելնելով դրա հիմքում ընկած տարբերակման չափանիշներից: Ուսումնասիրությունների արդյունքում կատարվել են բազմաթիվ տեսական եզրահանգումներ և ներկայացվել են ՀՀ օրենսդրության ու իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման գործնական առաջարկություններ: Աշխատանքում տեղ է գտել այն կարևոր գաղափարը՝ ըստ որի օրենսդիրները կրում են սահմանադրական իրավանորմերին հետևելու և իրենց՝ իրավաբանական նշանակություն ունեցող վարքագծի համար պատասխան տալու պարտականություն:

Բանալի բառեր: Ազգային ժողով, պատգամավոր, խորհրդարանական լուսմներ, մշտական հանձնաժողովներ, խորհրդարանի արձակում, պատգամավորի հետևանքի ինստիտուտ, հերթական նստաշրջան, բարոյաէթիկական կանոններ, անհամատեղելիության պահանջներ, հերթական ընտրություն:

Լինելով պետական իշխանության բարձրագույն ներկայացուցչական մարմին՝ խորհրդարանը համարվում է սահմանադրական պատասխանատվության կոլեկտիվ սուբյեկտ: Օրենսդիր մարմինը լուրջ դերակատարություն ունի հասարակության և

պետության կյանքում՝ Օրենսդիր մարմնի իրավական պատասխանատվությունը դասակարգվում է տարբեր տեսակների՝ պայմանավորված դրա հիմքում ընկած չափանիշից: Օրենսդիր մարմնի պատասխանատվությունը լինում է դրական (պոզիտիվ) և բացասական (նեգատիվ): Օրենսդիրը կրում է նաև կոլեկտիվ դրական պատասխանատվություն: Որպես ժողովրդի անմիջական ներկայացուցչական մարմին՝ Ազգային ժողովն ունի մի շարք դրական պարտավորություններ: Այդ պարտավորություններից են՝

1. Օրենսդիր իշխանությունը պատկանում է Ազգային ժողովին: Կարծում ենք, որ օրենսդրի դրական պատասխանատվությունը տարբեր շերտերի ունեցած շահերի հավասարակշռումն է²: Ժողովուրդն է օրենսդրին տվել լիազորություններ կարևոր հարցերը լուծելու համար, հետևաբար, օրենսդիրները պետք է հաշվի առնեն սոցիալական բոլոր շերտերի շահերը³: Թյուր կարծիք կա ձևավորված առ այն, որ օրենքներ ընդունելու իրավունքն Ազգային ժողովինն է: Մեր կարծիքով, Ազգային ժողովի սահմանադրաիրավական պարտականությունն է օրենքների ընդունումը: Օրենսդիրը պատասխանատու է «որակյալ» օրենքների համար, և վերջիններս սահմանվում են օրինաստեղծման բոլոր սկզբունքների, իրավաբանական տեխնիկայի և միջոցների պահպանմամբ⁴: «Որակյալ» օրենք գաղափարի տակ պետք է հասկանանք գիտակցված և ամուր բազիս հասարակության սոցիալական վարքագծի, հանրային իշխանության վարքագծի, քաղաքական կուսակցությունների վարքագծի համար:

¹ Տե՛ս **Ильинская И. П., Крылова, Н. С., Ковлер А. И.**, Парламенты мира, М., 1991, Баталов Э., Парламент и президент в конституциях зарубежных стран// Российская Федерация, 1994, N 5, **Дэвидсон И.**, Президенты и парламенты// Российский обозреватель, 1996, N 3.

² Տե՛ս **Витрук Н.В.**, Общая теория юридической ответственности, М., 2009.

³ Տե՛ս **О. А. Фомичева**, К вопросу об институте парламентской ответственности, Вестник Омского университета, Серия <<Право>>. 2014. N 4.

⁴ Տե՛ս **Мордовец А. С.**, Социально-юридический механизм обеспечения прав человека и гражданина, Саратов, 1997.

2. Կատարել անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ, որոնք պայմանավորված են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից պետության դեմ կայացված որոշումներով:
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների կատարում: Իրավական ակտը սահմանադրությանը համապատասխանող ճանաչելն օրենսդիր մարմնի վրա նման պարտավորություն չի դնում, բայց ի տարբերություն հակասահմանադրական ճանաչելու դեպքերի, օրենսդրի ուղղակի պարտավորությունն է հակասահմանադրական ճանաչված նորմի վերացումը⁵: Այս մասին արժեքավոր կարծիք է հայտնել իրավագետ Հանս Յորգեն Պապյեն⁶: Գ. Հարությունյանը նշում է, որ սահմանադրական դատարանի որոշմանը պետք է մոտենալ որպես մեկ ամբողջություն՝ չառանձնացնելով եզրափակիչ մասը դատարանի իրավական դիրքորոշումներից⁷: Սահմանադրական դատարան-Ազգային ժողով փոխհարաբերությունների բնույթը պայմանավորված է նաև սահմանադրական դատարանի որոշումների էությամբ, այդ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների բովանդակությամբ⁸:

Բացի դրական (պոզիտիվ) պատասխանատվությունից՝ օրենսդիր մարմինը կրում է բացասական (նեգատիվ) պատասխանատվություն: Կան պետություններ, որտեղ օրենսդիր մարմնի արձակման հարցը լուծվում է հանրաքվեի միջոցով: Մի շարք պետությունների սահմանադրություններ նախատեսում են խորհրդարանի արձակումը որպես սահմանադրական պատասխանատվության միջոց, երբ խորհրդարանը դրսևորում է անգործություն կամ անօրինականություն: Ուզբեկստանի Սահմանադրության 95-րդ հոդվածով սահմանված է, որ Նախագահի որոշմամբ

⁵ Տե՛ս Վ. Վարդանյան, Սահմանադրական դատարանի որոշումների կատարման ապահովման մեխանիզմները. արդի խնդիրները և հնարավոր լուծումները: Սահմանադրական արդարադատության հիմնախնդիրները և զարգացման միտումներն արդի ժամանակաշրջանում:

⁶ Տե՛ս Hans-Jorgen Papier, Problems of enforcing Constitutional Court Decisions // International Almanac: <<Constitutional justice in the new millennium>>, 2003.

⁷ Տե՛ս Арутюнян Г., Гарантии исполнения постановления Конституционного Суда// Международный альманах “Конституционное правосудие в новом тысячелетии”, Ереван, 2012.

⁸ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2008թ. նոյեմբերի 25-ի ՍԴՈ-780 որոշումը, 2009թ. հոկտեմբերի 13-ի ՍԴՈ-833 որոշումը, 2011թ. փետրվարի 8-ի ՍԴՈ-936 որոշումը:

պառլամենտը կարող է ցրվել, եթե բազմիցս ընդունել է Սահմանադրությանը հակասող օրենքներ⁹: Մոլդովայի Սահմանադրության 85-րդ հոդվածի համաձայն՝ եթե պառլամենտը երեք ամիս չի ընդունում որևէ օրենք, ապա նախագահն իրավունք ունի արձակելու այն¹⁰: Չեխիայի պատգամավորների պալատը Նախագահը կարող է արձակել, եթե նստաշրջաններն ընդհատվել են սահմանված ժամկետից ավել ժամկետով, նաև այն դեպքում, երբ պատգամավորների պալատն ավելի քան երեք ամսվա ընթացքում չի կարողացել օրենք ընդունել՝ չնայած այն հանգամանքին, որ նստաշրջանը չի ընդհատվել, և նրանք կրկնակի նիստ են անցկացրել¹¹: Նմանատիպ կարգավորումներ է առկա նաև Սլովակիայի Սահմանադրության 102-րդ հոդվածում: Անգործության հետևանքով խորհրդարանի ցրման հնարավորություն է նախատեսված նաև Ռուսաստանի Սահմանադրության 90-րդ հոդվածում, Մոլդովայի Սահմանադրության 85-րդ հոդվածում: Ադրբեջանի Հանրապետությունում մեկշաբաթյա ժամկետում Հանրապետության նախագահի կողմից խորհրդարանին (Միլլի Մեջլիսին) ներկայացված վարչապետի (պրեմիեր-մինիստրի) թեկնածության վերաբերյալ որոշում չկայացնելու կամ երեք անգամ Միլլի Մեջլիսի կողմից նախագահի ներկայացրած վարչապետի թեկնածությունները մերժելու դեպքում նախագահը ոչ թե լուծարում կամ արձակում է օրենսդիր մարմինը, այլ, շրջանցելով վերջինիս, նշանակում է կառավարության ղեկավարին՝ առանց խորհրդարանի համաձայնության¹²:

Աշխարհում պառլամենտների արձակման առավել տարածված հիմքը պատգամավորական կորպուսի անկարողությունն է՝ հաստատելու կառավարության ղեկավարի թեկնածությունը կամ ձևավորելու կառավարություն: Միջազգային պռակտիկայի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ կան երկրներ, որտեղ խորհրդարանի արձակումը կապված է վերջինիս՝ կառավարության ծրագիրը

⁹ Տե՛ս Конституция Республики Узбекистан, [http:// constitution.uz/](http://constitution.uz/), հոդված 95:

¹⁰ Տե՛ս Конституция Республики Молдова.

¹¹ Տե՛ս Конституция Чешской Республики 1992.

¹² Տե՛ս Конституция Азербайджанской Республики // Новые Конституции стран СНГ и Балтии, Сборник документов, М., 1998.

հաստատելու իրավունքի հետ: Արևելաեվրոպական որոշ երկրներում խորհրդարանի արձակման պատճառ է համարվում սահմանված ժամկետում որոշակի օրենքների չընդունման փաստը: Լեհաստանի Հանրապետության Սեյմը կարող է արձակվել, եթե պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը ներկայացնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում խորհրդարանն այն չընդունի:

Օրենսդիր մարմինն արձակելու՝ երկրի նախագահի իրավունքը զսպելու նպատակով պետությունների մեծամասնության մայր օրենքները բովանդակում են այդ իրավունքի կիրառումը տարբեր չափերով ու ձևերով սահմանափակող նորմեր: ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ Ազգային ժողովի ընտրություն չի անցկացվում: Այս դեպքում Ազգային ժողովի հերթական ընտրությունն անցկացվում է ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ շուտ, քան հիսուն, և ոչ ուշ, քան վաթսունհինգ օր հետո: Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ Ազգային ժողովի արձակումը կխարխլի երկրի հասարակական-քաղաքական առանց այդ էլ լարված իրավիճակը, և իշխանությունների «զսպումների և հակակշիռների» ապահովման սկզբունքն ուղղակի կդադարի գործել:

Ֆրանսիայի նախագահն Ազգային ժողովի արձակումից առաջ պետք է խորհրդակցի պառլամենտի երկու պալատների նախագահների հետ, բայց վերջիններիս կարծիքը պարտադիր չէ նրա համար: Նմանատիպ կարգավորում էր առկա նաև 1995թ. ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 3-րդ կետում՝ ըստ որի Հանրապետության նախագահն Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ խորհրդակցելուց հետո կարող էր արձակել խորհրդարանը: Սահմանադրական բարեփոխումների արդյունքում հանվեց այս դրույթը և 2005թ. բարեփոխված Սահմանադրության 74.1-րդ հոդվածում ամրագրվեց, որ Հանրապետության Նախագահն Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի առաջարկությամբ կարող է արձակել Ազգային ժողովը, եթե՝

ա) Ազգային ժողովը հերթական նստաշրջանի երեք ամսվա ընթացքում որոշում չի կայացնում կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագծի վերաբերյալ.

բ) հերթական նստաշրջանի ընթացքում Ազգային ժողովի նիստերը երեք ամսից ավել չեն գումարվում.

գ) հերթական նստաշրջանի ընթացքում Ազգային ժողովը երեք ամսից ավել իր կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ որևէ որոշում չի կայացնում:

Եթե Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանը չի կարող արձակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ, ապա Լեհաստանում՝ նաև այդ ռեժիմների վերացումից հետո երեք ամսվա ընթացքում: Մեր պետությունում ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ: Հատկանշական է, որ 1995թ. ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ կետը հստակ չէր և պարզ չէր, թե ով է գումարում ԱԺ-ի հատուկ նիստ: Սահմանադրական բարեփոխումների արդյունքում ամրագրվեց, որ իրավունքի ուժով անհապաղ գումարվում է ԱԺ-ի հատուկ նիստ, ինչի վառ օրինակը դարձավ մեր երկրում 2008թ. մարտի 1-ի լույս երկուսի գիշերը ՀՀ Նախագահի կողմից ռազմական դրություն հայտարարելուց անմիջապես հետո իրավունքի ուժով ԱԺ-ի հատուկ նիստի գումարումը:

Խորհրդարանի արձակման հիմքեր կարող են լինել օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների փոխհարաբերություններում առաջացող ճգնաժամը, խորհրդարանում պատգամավորական խմբակցությունների հարաբերակցության անհամապատասխանությունը հասարակության մեջ առկա քաղաքական ուժերի հարաբերակցությանը, նաև փորձել ընտրություններն անցկացնել հարմար պահի ու այդ կերպ իշխող կուսակցության համար ապահովել խորհրդարանական մեծամասնություն: Խորհրդարանի արձակման ինստիտուտն իր գոյությամբ կոչված է ապահովելու պետական իշխանության օրենսդիր մարմնի գործունեության արդյունավետությունը և կանխելու խորհրդարանական ճգնաժամերը:

Սահմանադրական պատասխանատվության միջոցներ կիրառվում են ոչ միայն

խորհրդարանի՝ որպես կոլեգիալ մարմնի, այլ նաև նրա առանձին անդամների նկատմամբ: «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի¹³ 4-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորը պարտավոր է մասնակցել Ազգային ժողովի, ինչպես նաև իր անդամակցած հանձնաժողովի և աշխատանքային խմբի նիստերին, մասնակցել իր անդամակցած հանձնաժողովի հրավիրած խորհրդարանական լսումներին, պահպանել պատգամավորական էթիկայի կանոնները, ապահովել պատգամավորական մանդատի անհամատեղելիության պահանջների կատարումը, կազմակերպել քաղաքացիների ընդունելություն, իր լիազորությունների շրջանակներում օրենքով սահմանված կարգով պատասխանել քաղաքացիների գրավոր առաջարկներին, պահպանել Ազգային ժողովի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնները: Ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ պատասխանատվություն է սահմանված միայն պատգամավորական էթիկայի կանոնների, պատգամավորական մանդատի անհամատեղելիության պահանջների խախտման կամ չկատարման համար: Կարծում ենք, որ բոլոր պարտականությունների կատարումը պետք է երաշխավորված լինի պետական հարկադրանքով՝ իրավական պատասխանատվությամբ. պատասխանատվության միջոցները պետք է համաչափ լինեն ունեցած պարտավորությանը և կատարած իրավախախտմանը: Մեկ այլ պատգամավորի փոխարեն քվեարկելու դեպքում տվյալ պատգամավորը պետք է զրկվի տվյալ ամսվա աշխատավարձից կամ դրա մի մասից, այդ մասին պետք է տեղեկություններ տեղադրվեն Ազգային ժողովի պաշտոնական կայքում, և այս կերպ նման դրսևորումները կանխելու փորձ անել:

«Հինգերորդ գումարման Ազգային ժողովում եղել են շուրջ երեք տասնյակ պատգամավորներ, որոնք գումարման 5 տարիների ընթացքում որևէ ելույթ չեն ունեցել, մտքերի փոխանակությանը չեն մասնակցել և երբևէ հարցադրումներ չեն արել¹⁴: Նման դեպքերի բացառումը կամ նվազումն ուղիղ համեմատական է քաղաքական համակարգի կայացման մակարդակին, ինչպես նաև օրենսդիրների քաղաքական

¹³ Տե՛ս « Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական օրենք:

¹⁴ Տե՛ս [http:// www.parliamentmonitoring.am/](http://www.parliamentmonitoring.am/) կայք:

պատասխանատվության զգացումին: Չնայած այս խնդիրն իր հանգուցալուծումը պետք է գտնի քաղաքական մակարդակով, այնուամենայնիվ, կարևորում ենք խնդրի իրավական կարգավորումը որպես հիմնական գործընթաց: Առաջարկում ենք, որ ՀՀ Ազգային ժողովի յուրաքանչյուր նստաշրջանի ավարտին բոլոր պատգամավորները հանրային գրավոր և բանավոր հաշվետվություններ ներկայացնեն իրենց գործունեության վերաբերյալ, որտեղ կարտացոլվեն տեղեկություններ մասնակցած օրենքի նախագծերի քննարկման, օրենսդրական նախաձեռնությունների, որպես հիմնական կամ հարակից զեկուցող հանդես գալու, մտքերի փոխանակության ժամանակ ունեցած ելույթների քանակների, մշտական հանձնաժողովում իր գործունեության մասին: Այս հաշվետվությունները պետք է տեղադրվեն ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայքէջում: Իսկ եթե գործ ունենք մեծամասնական կամ վարկանիշային ընտրակարգի հետ, ապա յուրաքանչյուր նստաշրջանի ավարտին հանրային ելույթ ունենալ տվյալ տարածքի ընտրողների առջև:

Խորհրդային հասարակարգում պատգամավորի պատասխանատվությունը կապվում էր նրա իմպերատիվ մանդատի հետ: Ըստ այդմ՝ պատգամավորը կարող էր հետ կանչվել: Հետխորհրդային պետություններում պատգամավորի իմպերատիվ մանդատը փոխարինվեց ազատ մանդատով, և այլևս պատգամավորին չի սպառնում հետկանչը: Բայց դա ամենևին չի նշանակում, որ պատգամավորը դադարել է սահմանադրական պատասխանատվության սուբյեկտ լինելուց: Ներկայացուցչական ազատ մանդատի էությունն այն է, որ պատգամավորները ներկայացնում են ոչ թե ու ոչ միայն իրենց ընտրողներին, այլև ընդհանրական սուբյեկտ՝ ժողովրդին, որի կամքը գերակա է տեղական ընտրազանգվածի կամքի նկատմամբ¹⁵: Կան պետություններ, որտեղ բոլոր այն դեպքերում, երբ օրենսդիրը չի կատարում իր պարտականությունները, ապա պառլամենտի նախագահը կարող է տպագիր մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հանրությանը տեղեկացնել պատգամավորի կողմից իր լիազորությունների չկատարման վերաբերյալ¹⁶: Մի շարք երկրներում առկա է

¹⁵ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2009թ. հունիսի 30-ի ՍԴՈ- 810 որոշում:

¹⁶ Տե՛ս О статусе Депутата Парламента Республики Северная Осетия- Алания: Закон Республики

պատգամավորի հետկանչի ինստիտուտը, որը առավել բնորոշ է դաշնային կառուցվածքի ձև ունեցող երկրներին և տարածվում է դաշնության սուբյեկտների օրենսդիրների և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրված ներկայացուցիչների վրա¹⁷:

Օրենսդիրի նկատմամբ կիրառված պատասխանատվության օրինակները միջազգային իրավական պռակտիկայում բազմաթիվ են: ԱՄՆ Ներկայացուցիչների պալատը 2002թ. հուլիսի 24-ին որոշում է ընդունում կոնգրեսականին պաշտոնանկ անելու մասին՝ այն հիմքով, որ նա մեղադրվում է կաշառակերության, արդարադատությանը խոչընդոտելու և հարկային իրավախախտումների համար¹⁸:

Անհրաժեշտ ենք համարում նաև անդրադառնալ այն հարցին, թե պատգամավորի սահմանադրական պատասխանատվությունն ինչպես է հարաբերակցվում պատգամավորի անձեռնմխելիության ինստիտուտի հետ: Կարծում ենք՝ պատգամավորը պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն է կրում՝ օգտվելով իր անձեռնմխելիության իրավունքից, իսկ երբ նեգատիվ սահմանադրական պատասխանատվության միջոցի կիառման անհրաժեշտություն է առաջանում, պետք է պատգամավորը զրկվի անձեռնմխելիության իրավունքից: Մեր կարծիքով՝ պատգամավորական անձեռնմխելիությունից զրկումը կարելի է համարել սահմանադրաիրավական սանկցիա, որի կիրառումից հետո է միայն հնարավոր նրան որպես մեղադրյալ ներգրավել, կալանավորել կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցել, եթե, իհարկե, պատգամավորը չի ձերբակալվել հանցագործության կատարման պահին:

Առաջարկում ենք ներպետական իրավական համակարգ ներմուծել մի շարք հիմքեր, որոնք հնարավորություն կընձեռեն պատգամավորի լիազորությունների դադարեցման համար: Այդ հիմքերն են՝

¹⁷ Տե՛ս, մասնավորապես, Ռուսաստանում, ԱՄՆ-ի որոշ նահանգներում, Конституция Республики Татарстан от 6 ноября 1992г.

¹⁸ Տե՛ս <http://edition.cnn.com/2002/ALLPOLITICS/07/24traficant.expulsion/index.html>, մեկ օրինակ ևս՝ Լիտվայի Սեյմի անդամը մեղավոր է ճանաչվել խոշոր խարդախության կատարման մեջ և հինգ տարվա ազատազրկման է դատապարտվել:

1. երբ պատգամավորը չի ներկայացնում կամ ոչ ժամանակին և ոչ ամբողջական է ներկայացնում իր և իր ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց կողմից լրացված գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագիրը,
2. երբ խախտում է անհամատեղելիության պահանջ, այն է՝ գիտական, մանկավարժական գործունեություն իրականացնելն արգելել, եթե այդ գործունեությունից գոյացող եկամուտները որևիցե կերպ ոչ բարեկամ պետությունների կամ դրանց հետ փոխկապակցված կազմակերպություններ, օտարերկրյա քաղաքացիներ կամ քաղաքացիություն չունեցող անձինք են¹⁹:

Օրենսդիրների համար նախատեսված են նաև անհամատեղելիության պահանջներ, որոնք ուղղված են նրանց անկախության ապահովմանը և օրենսդիր մարմնի հեղինակության պահպանմանը: Օրենսդիրների ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելք նախատեսված է բազմաթիվ երկրների օրենսդրությամբ²⁰: Լեհաստանի Սահմանադրության համաձայն՝ պատգամավորները չեն կարող զբաղվել տնտեսական գործունեությամբ՝ պետական միջոցների օգտագործմամբ կամ դրանց յուրացմամբ: Նման փաստի դեպքում օրենսդիրը, Սեյմի առաջարկի հիման վրա, զրկվում է մանդատից²¹: Ադրբեյջանի Սահմանադրության 89-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորի մանդատի հետ անհամատեղելի է համարվում կրոնական գործիչ լինելը²²:

Կարծում ենք, անհամատեղելիության պահանջները պահպանելը, իսկ դրանց խախտման համար իրավական հետևանքներ սահմանելն օրենսդիրների պատասխանատվության կարևոր հարցերից մեկն է: Ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, երբ օրենսդիր եկամուտ-աշխատավարձ հարաբերակցության մեջ ակնհայտ երևում է, որ եկամուտների գոյացման մեջ աշխատավարձի մասնաբաժինը շատ փոքր է. սա կոռուպցիոն դրսևորում է և ցցուն փաստ այն մասին, որ անհամատեղելիության պահանջները հստակ ու լիարժեք չեն սահմանված կամ էլ վերահսկողության

¹⁹ Տե՛ս Федеральный закон от 08.05.1994 N 3 Ф-3 “ О статусе члена Совета Федерации и статусе депутата Государственной Думы Федерального Собрания Российской Федерации”, հոդված 4,6,12:

²⁰ Տե՛ս Ռուսաստանի Դաշնությունում Փ3 <<О статусе депутата Совета Федерации и статусе депутата Государственной Думы Федерального Собрания Российской Федерации>>.

²¹ Տե՛ս Конституция Польской Республики от 2 апреля 1997, հոդված 107, 108:

²² Տե՛ս Конституция Азербайджана от 12 ноября 1995 года.

մեխանիզմներն արդյունավետ չեն: Մեր երկրում անհամատեղելիության պահանջների վերահսկողությունը բավականին թույլ է: Կարծում ենք՝ օրենսդիր մարմնի բիզնես-օլիգարխիան և քրեա-օլիգարխիան բացառելու, կոռուպցիոն և հովանավորչական դրսևորումները կանխելու համար անհրաժեշտ են համակարգային բարեփոխումներ, որոնք հնարավորություն կստեղծեն արդյունավետ վերահսկողություն իրականացնել դրանց պահպանման նկատմամբ: Վերլուծենք ներպետական օրենսդրական ամրագրումները, որոնցով սահմանված են պատգամավորի լիազորությունների դադարեցման հիմքերը: Սահմանված է, որ պատգամավորի լիազորությունները դադարեցվում են յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ընթացքում քվեարկությունների առնվազն կեսից անհարգելի բացակայելու դեպքում: Այս կարգավորումը նեղացնում է պատգամավորին պատասխանատվության ենթարկելու շրջանակը: Իրավիճակ ունենք, երբ ակնհայտ անհամապատասխանություն է առաջանում պատգամավորի ունեցած դրական և բացասական պատասխանատվության միջև: «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի²³ 4-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորը պարտավոր է մասնակցել Ազգային ժողովի, իր անդամակցած հանձնաժողովի և աշխատանքային խմբի նիստերին, մասնակցել իր անդամակցած հանձնաժողովի հրավիրած խորհրդարանական լսումներին:

Հանգում ենք հետևյալին, որ մի կողմից սահմանվում են պատգամավորի պարտականությունները, բայց դրանց չկատարման համար սահմանված չէ որևէ բացասական իրավական հետևանք: Մյուս կողմից էլ ստացվում է, որ, ըստ Սահմանադրության, պատգամավորը կարող է չկատարել պատգամավորական իր պարտականությունները, այդ թվում՝ չմասնակցել հանձնաժողովների նիստերին, Ազգային ժողովի նիստերին, և արդյունքում որևէ իրավական հետևանք առկա չէ: Առաջարկում ենք սահմանադրական բարեփոխումներ նախաձեռնելիս սահմանադրական այդ դրույթը շարադրել հետևյալ ձևակերպմամբ. «Պատգամավորի լիազորությունները դադարեցվում են յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ընթացքում Ազգային ժողովի նիստերի

²³ Տե՛ս «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքը:

առնվազն կեսից անհարգելի բացակայելու դեպքում»։ Այս առաջարկության հիմք է հանդիսացել միջազգային բազմաձև փորձի ուսումնասիրությունը։ Այսպես, պառլամենտի անդամը զրկվում է իր լիազորություններից, եթե առանց հարգելի պատճառների բացակայում է պառլամենտի աշխատանքներից ավելի քան չորս ամիս²⁴, վաթսուն օր²⁵, հերթական նիստերի մեկ երրորդից²⁶։ ՀՀ Սահմանադրություն և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենք հակասություններ էլի կան։ Մասնավորապես, այդ օրենքի 156-րդ հոդվածը կանոնակարգում է մեկ օրացուցային կիսամյակի ընթացքում քվեարկությունների առնվազն կեսից անհարգելի բացակայելու դեպքում պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցով սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ հարցերը, այդ թվում՝ քվեարկությունից պատգամավորի բացակայությունը հարգելի համարելու դեպքերը, ինչը պահանջել է ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1081 որոշման մեջ։ Այդ հոդվածի վերլուծությունից ստացվում է, որ չնայած բացակայությունների անհարգելի լինելուն, Ազգային ժողովի խորհուրդը կարող է չդիմել սահմանադրական դատարան։ Կարծում ենք, որ այսպիսի կարգավորումն անհիմն նեղացնում է Սահմանադրությամբ պատգամավորի լիազորությունները դադարեցնելու իրավական գործընթացն սկսելու հնարավորությունը։ Բացի այդ, տվյալ գործընթացը քաղաքական մեծամասնության կամահայտնությունից է կախված լինում։ Առաջարկում ենք հստակ ամրագրել, որ համապատասխան հիմքերի առկայության դեպքում Ազգային ժողովի խորհուրդը պարտավոր է դիմել սահմանադրական դատարան, հատկապես, որ բխում է 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 5-րդ մասի այն տրամաբանությունից, որ սահմանադրական դատարան դիմելը չի դիտարկվում որպես իրավունք։ Նմանատիպ խնդիր առկա է նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 157-րդ հոդվածի դեպքում։

Պատգամավորների համար կարևորվում է նաև նրանց էթիկական և բարոյական վարքագիծը։ Բազմաթիվ են այն երկրները, որտեղ պատգամավորների համար

²⁴ Տե՛ս Конституция Грузии, 24.08.1995г., հոդված 54:

²⁵ Տե՛ս Конституция Индии, հոդված 101:

²⁶ Տե՛ս Конституция Бразилии, 5.10.1988г., հոդված 55:

օրենսդրությամբ սահմանված են բարոյաէթիկական կանոններ և դրանք խախտելու դեպքում պատասխանատվության որոշակի միջոցներ²⁷: Պատասխանատվության միջոցներից է ձայնի իրավունքից զրկումը, որը տարբեր տևողությամբ է իրականացվում (մեկ ամիս, մեկ կամ երկու նիստ, մինչև նիստի ավարտը): Պատասխանատվության տեսակներից են պարսավանքը²⁸, կարգի հրավիրվելու պահանջը²⁹, հրապարակայնորեն ներողություն խնդրելու պարտավորությունը³⁰, օրենսդրի վարքագծի քննադատությունը³¹, ԶԼՄ-ներով օրենսդրի կողմից էթիկական նորմերի խախտման մասին հայտնելը, նկատողություն և նախազգուշացում անթույլատրելի վարքագծի մասին: Վենետիկի հանձնաժողովը հղում է կատարել ՄԻԵԴ դիրքորոշմանը³², որտեղ նշված է, որ վիրավորական արտահայտությունների համար պառլամենտը պետք է առնվազն ներքին կառուցակարգեր և կարգապահական պատասխանատվություն նախատեսի, ինչը բխում է հանրային և մասնավոր շահերի պաշտպանության անհրաժեշտությունից³³: Հայաստանում պատգամավորի համար նույնպես սահմանված են էթիկայի որոշակի կանոններ³⁴ և կարգապահական պատասխանատվության որոշակի միջոցներ³⁵:

Ի վերջո, ուսումնասիրելով տարբեր երկրների փորձը՝ առաջարկում ենք, որ օրենսդիրների սահմանադրաիրավական նեգատիվ պատասխանատվությունը ներառի հետևյալ դրույթները.

²⁷ Տե՛ս Փ3 “ Օ статусе члена Совета Федерации и статусе депутата Государственной Думы Федерального Собрания Российской Федерации”, հոդված 9:
²⁸ Տե՛ս Օ статусе депутата Алтайского краевого Законодательного Собрания: Закон Алтайского края от 4 декабря 2000, N 76-3С: по состоянию на 11 марта 2013, Сборник законодательства Алтайского края, 2000, էջ 16:
²⁹ Տե՛ս Օ регламенте Законодательного Собрания Приморского края: Постановление Законодательного Собрания Приморского края от 7 августа 2002, N 36: по состоянию на 25 сентября 2013, Ведомости Законодательного Собрания Приморского края, 2002, N 3, էջ 4:
³⁰ Տե՛ս Օ статусе депутата Государственного Совета Удмуртской Республики: Закон УР от 29 февраля 2008, 1-РЗ: по состоянию на 8 июля 2013, Известия Удмуртской Республики, 2008, էջ 5:
³¹ Օ Регламенте Тульской областной Думы: Постановление Тульской областной Думы от 27 июня 2002, N 29/736: по состоянию на 7 февраля 2013.
³² Տե՛ս ECTHR Cordova v. Italy 40877/98, 30-ը հունվարի 2003թ.:
³³ Տե՛ս Venice Commission, CDL- AD 011, կետ 90-93:
³⁴ Տե՛ս « Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենք, 3-րդ հոդված:
³⁵ Տե՛ս «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 52:

1. պատգամավորի լիազորությունների դադարեցումը լիազորությունների պարբերաբար չկատարելու դեպքում,
2. աշխատավարձից պահում կատարելը, հավելավճարներից զրկելը,
3. անհամատեղելիության պահանջների խախտման համար պատասխանատվության ենթարկելը,
4. նախազգուշացում հայտարարելը, խոսափողն անջատելը, լիազումար նիստին ելույթ ունենալու իրավունքից, քվեարկելու իրավունքից զրկելը, որոշակի ժամանակով նիստերի դադարից հեռացնել

ОСНОВЫ КОНСТИТУЦИОННОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЗАКОНОДАТЕЛЬНОЙ ВЛАСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Герберт Арутюнян

Соискатель кафедры

конституционного

права ЕГУ

Аннотация: В рамках данной статьи автор рассмотрел некоторые методологические вопросы конституционной ответственности законодательной власти. В качестве примеров была рассмотрена правовая практика ряда европейских стран. В работе четко классифицирован институт конституционной ответственности законодательной власти, исходя из лежащих в ее основе критериев дифференциации. В результате проведенных исследований было сделано множество теоретических выводов и представлены практические рекомендации по совершенствованию законодательства и юридической практики РА. В работе содержится важная идея о том, что законодатели обязаны следовать конституционным нормам и нести ответственность за свои юридически значимые действия.

Ключевые слова: Парламент, депутат, парламентские слушания, постоянные комитеты, роспуск парламента, институт отзыва депутатов, очередная сессия, моральные правила, претензии о несовместимости, очередные выборы.

THE FUNDAMENTALS OF THE CONSTITUTIONAL RESPONSIBILITY OF THE LEGISLATIVE AUTHORITY IN THE REPUBLIC OF ARMENIA

Herbert Harutyunyan

PhD student at the YSU

Chair of Constitutional Law

Summary: Within the framework of this article, the author discussed some methodological issues of the constitutional responsibility of the legislative power. The legal practices of several European countries were considered as examples. In the work, the institution of constitutional responsibility of the legislative power was clearly classified, based on the differentiation criteria underlying it. As a result of the conducted studies, many theoretical conclusions were made and practical recommendations for improving RA legislation and legal practice were presented. The work contains the important idea that legislators have a duty to follow constitutional norms and to answer for their legally significant behavior.

Key words: Parliament, Member of Parliament, parliamentary hearings, standing committees, dissolution of parliament, Institute of MP recall, regular session, moral rules, incompatibility claims, another election.

Հոդվածը գրախոսվել է՝ 22.01.2024թ.
Ներկայացվել է փակագրության՝ 29.01.2024թ.